«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի նի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 06

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 04.07.2016թ.ժամը 17.06

Համաձայն 24.06.2016թ-ին՝«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից,«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված դիմումի՝ սնանկության գործով կառավարիչներ՝Մայիս Հայրապետյանի,Ռուբեն Խալաթյանի, Արտակ Ոսկանյանի,Խաչատուր Պապոյանի,Ստեփան Աբրահամյանի, Գևորգ Շահվերդայնի և Ռուբիկ Տոնայանի, վարքագծերի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար,ս/թ-ի Հուլիսի 04-ին,ժամը 17.00-ին՝ք.Երևան, Արշակունյաց 5.417 սենյակ,հասցեյում,հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ.

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Աշոտ Խաչատրյանը

«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝Ջիվանշիր Աֆյանը/Հրավիրված,խարհրդակցական ձայնի իրավունքով/

Սնանկության գործերով կառավարիչներ՝ Ռուբեն Խալաթյանը և Խաչատուր Պապոյանը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հանձնաժողովին տեղեկացրեց որ ՍԳ կառավարիչ Ռուբիկ Տոնոյանը նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված է,բայց տեղաշարժվելու հետ կապված առողջական խնդիրներ /ոտքը կոտրված է/ ունենալու պատճառով նիստին ներկա գտնվել չի կարող,իր կողմից այցելություն է կատարվել նրա բնակության վայր, որտեղ էլ կառավարչի կողմից լրացվել է «Պարտքի մարման ժամանակացույց» որը և ներկայացվում է հանձնաժողովին:Միաժամանակ Տ.Հարությունյանը նշեց,որ մինչև հանձնաժողովի նիստը ՍԳ կառավարիչ՝Արտակ Ոսկանյան այցելել է ԻԿԿ,կատարել է անդամավճարների մասնակի մարում՝40000 ՀՀ դրամի չափով,իսկ պարտքի մնացորդի վճարման համար կնքել է՝ համաձայնագիր-պայմանագիր/ժամանակացույց/:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հանձնաժողովին տեղեկացրեց նաև որ մնացած բոլոր կառավարիչները իր կողմից պատշաճ ծանուցումներով տեղեկացված են հանձնաժողովի նիստի,օրակարգի,տեղի և ժամի վերաբերյալ,բայց իրենց կամ իրենց լիազորված ներկայացուցիչների ներկայությունը չեն ապահովվել նիստին,ինչը համաձայն «Կարգապահական վարույթի անցկացման» Կարգի 4.2 մասի արգելք չի կարգապահական հանձնաժողովի կողմից առկա վարույթը իրականացնելու համար:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
24.06.2016թ-ին՝«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից,«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված դիմումի, սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանի,Ռուբեն Խալաթյանի,Խաչատուր Պապոյանի,Ստեփան Աբրահամյանի,Գևորգ Շահվերդայնի և Ռուբիկ Տոնայանի,վարքագծերի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ `Տիգրան Հարությունյանին,ով ներկայացրեց 24.06.2016թ-ին`«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից,ստացված թվով 7/յոթ/ սնանկության գործով կառավարիչների կողմից անդամավճարների և այլ վճարային պարտավորությունների չկատարման ինչպես նաև այդ պարտավորությունների կատարմանն ուղղված վճարման համաձայնագիր-պայմանագիր չկնքելու համար,ՍԳ կառավարիչների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումը:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ`Հենրիկ Մարտիկյանը և նշեց,որ 15.06.2016թ-ին և 17.06.2016թ-ին`«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից արդեն ստացվել էր դիմումներ որոնք վերաբերվում էին 11 սնանկության գործով կառավարիչների կողմից վճարային պարտավորությունների չկատարմանը,ինչի փաստը ապացուցող ոչ մի փաստաթուղթ գործադիր մարմնի կողմից չէր ներկայացվել հանձնաժողովին,որպիսզի հիմքով էլ`20.06.2016թ-ի Կարգապահական հանձնաժողովի նիստով կարգապահական վարույթ հարուցվելը հանձնաժողովի կաղմից մերժվել էր,բայց այժմ գործադիր մարմնի կողմից դիմումին կից ներկայացվել է փաստաթղթեր կառավարիչների պարտավորությունների չափի,դրանց առաջացման հիմքերի վերաբերյալ,ինչը բավականին տեղեկություններ և հիմք է տալիս կարգապահական վարույթ հարուցելու հարցում և առաջարկեց ԻԿԿ գործադիր մարմնից 24.06.2016թ-ին ներկայացված 7 սնանկության գործով կառավարիչների կողմից վճարային պարտավորությունների չկատարմանը վերաբերյալ դիմումի հիմքով հարուցել կարգապահական վարույթ:

Ձայնի իրավունք խնդրեց սնանկության գործով կառավարիչ՝ Խաչատուր Պապոյանը և ներկայացրեց հանձնաժողովին,որ իր պարտավորությունները կազմում են՝ 203 000 ՀՀ դրամ ամսեկան անդամավճարների գծով,որոնք առաջացել են սնանկության գործերում դրամական միջոցների բացակայության պատճառով,բայց ինքը հասկանում է,որ այդ պատճառաբանությունը անդավճարների վճարման համար հիմնավոր չի և այժմ իր մոտ ստացվում է հնարավորություն երկու ամսվա ընթացքում փակել պարտքերը,որի վերաբերյալ պատրաստ է լրացնել և կատարել «Պարտքի մարման ժամանակացույց»-ը,որը և անհապաղ կատարվեց ՍԳ Կառավրչի կողմից:

Ելույթի ձայն վերցրեց Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը,ով մասնավորապես նշեց,որ ԻԿԿ գործադիր մարմնից ստացված դիմումում նշված է այն կառավարիչների անունները, որոնք ունեն պարտքեր և չեն կատարել գործողություններ դրանք մարելու ուղղությամբ, որոնց վերաբերյալ խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և քննել այդ կառավարիչների կարգապահական խախտման փաստերի հարցը,բայց քանի որ ՍԳ կառավարիչներ՝Ռուբիկ Տոնոյանի,Արտակ Ոսկանյանի և Խաչատուր Պապոյանի կողմից արդեն կատարվել են գործողություններ իրենց պարտավորությունների մարմանն ուղղված,այն է մասնակի մարումներ ու կնքվել է «Պարտքի մարման ժամանակացույց» -երը,ուստի ինքը առաջարկում է այդ երեք ՍԳ կառավարիչների վերաբերյալ կարգապահական վարույթ չհարուցել:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը և եկան այն եզրակացության որ հանձնաժողովի քննարկման համար անհրաժեշտ նյութեր գործադիր մարմնի կողմից ներկայացվել են,որոնց հիմք են տալիս որպեսզի հարուցվի կարգապահական վարույթ հետևյալ սնանկության գործերով կառավարիչների՝ Մայիս Հայրապետյանի,Ռուբեն Խալաթյանի,Ստեփան Աբրահամյանի,Գևորգ Շահվերդյանի մասնագիտական վարքագծի էթիկայի կանոնների խախտման փաստերի քննության նպատակով:

Հանձնաժողովի նախագահն կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.24.06.2016թ-ին՝«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից,«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված դիմումի հիմքով՝ սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանի,Ռուբեն Խալաթյանի, Ստեփան Աբրահամյանի,Գևորգ Շահվերդյանի մասնագիտական վարքագծերի վերաբերյալ հարուցել կարգապահական վարույթ:
2.Սնանկության գործերով կառավարիչներ՝Ռուբեն Տոնայանի,Արտակ Ոսկանյանի և Խաչատուր Պապոյանի մասնագիտական վարքագծերի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելը մերժել, կարգապահական վարույթի նախապատրաստական փուլում պարտավորությունների մարմանն ուղղված գործողություններ,այն է՝«Պարտքի մարման ժամանակացույց»-եր կնքելու և դրանք կատարելու պարտավորվելու պատճառաբանությամբ:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանին,ով ներկայացրեց,«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ գործադիր մարմնից ՍԳ կառավարիչներ՝Մայիս Հայրապետյանի,Ռուբեն Խալաթյանի,Արտակ Ոսկանյանի, Ստեփան Աբրահամյանի,Գևորգ Շահվերդյանի վերաբերյալ ստացված նյութերը,ըստ որոնց կառավարիչների պարտավորությունները՝«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ-ի հանդեպ կազմել են՝
ա/Մայիս Հայրապետյան – պարտավորության չափը՝ 302530 ՀՀ դրամ,որպես անդամավճար կառավարչի վարձատրությունից 5 տոկոսի չափով,սահմանված «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ-ի կանոնադրությամբ /հաստատված՝19.02.2011թ-ի ընդհանուր ժողովի որոշման 1-ին կետով/
բ/Ռուբեն Խալաթյան - պարտավորության չափը՝ 1437500 ՀՀ դրամ,որպես անդամավճար կառավարչի վարձատրությունից 5 տոկոսի չափով,սահմանված «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ-ի կանոնադրությամբ /հաստատված՝19.02.2011թ-ի ընդհանուր ժողովի որոշման 1-ին կետով/
գ/Ստեփան Աբրահամյան - պարտավորության չափը՝ 63000 ՀՀ դրամ,որպես անդամավճար ամսեկան սահմանված չափով,սահմանված «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ-ի կանոնադրությամբ /հաստատված՝19.02.2011թ-ի ընդհանուր ժողովի որոշման 1-ին կետով/ և 150000 ՀՀ դրամ նախկինում վերցված փոխառությունների գծով:
դ/Գևորգ Շահվերդյան - պարտավորության չափը՝ 182000 ՀՀ դրամ,որպես անդամավճար ամսեկան սահմանված չափով,սահմանված «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿԿ-ի կանոնադրությամբ /հաստատված՝19.02.2011թ-ի ընդհանուր ժողովի որոշման 1-ին կետով/
Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նաև,վերոգրյալ ՍԳ Կառավարիչներին «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր մարմնից, 27.05.2016թ-ին հասեյագրված գրությունները-պահանջագրերը,ըստ որոնց գործադիր մարմինը կառավարիչներից խնդրել է 10 օրյա ժամկետում կատարել վերոգրյալ պարտավորությունները կամ կնքել գրավոր համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/ գումարները վճարելու վերաբերյալ:Բոլոր կառավարիչները պատշաճ ստացել են գրությունները և մինչ օրս չեն կատարել ոչ վճարումները և ոչ էլ կնքել են համաձայնագիր -պայմանագիր /ժամանակացույց/,այսինքն դրսեվորել են անգործություն «ՍԳԿԿ» ԻԿԿ որոշումների կատարման վերաբերյալ և չեն կատարել «ՍԳԿԿ» ԻԿԿ Կանոնադրությամբ իրենց վրա դրված պարտականությունները,ինչը «ՍԳԿԿ» ԻԿԿ սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի Կանոնների 5-րդ հոդվածի 4-րդ կետի.
- Կառավարիչը պարտավոր է՝կատարել «ՍԳԿԿ» ԻԿԿ մարմինների՝իրենց իրավասության սահմաններում ընդունած որոշումները:
խախտում է :
Բացատրությունների համար ձայնը տրվեց ներկա ՍԳ Կառավարիչ՝ Ռուբեն Խալաթյանին,ով իրեն ուղղված այն հարցին թե ինչու չի վճարվել, կառավարչի վարձատրությունից 5 տոկոսի չափով հաշվարկված՝1 437 500 ՀՀ դրամ,անդամավճարը,կառավարիչը պատասխանեց,որ ինքը ունեցել է ֆինանսական դժվարություններ կապված իր անձնական վարկերի և դրանց սպասարկման վերաբերյալ և իր վարձատրությունը ամբեղջությամբ,այդ թվում նաև անդամավճարը ուղղել է վարկերի մարմանը,բայց ներկայումս իր վարույթներում գտնվող սնանկության գործերում

ունիեցել է և ունի մեծ քանակությամբ աճուրդում գտնվող գույքեր,որոնց իրացման դեպքում,որը ինքը հույս ուներ պետք է կատարվեին ավելի վաղ,ինքը պարտավորվում է փակել բոլոր պարտավորություններ:Իսկ ժամանակացույց չի կնքել,քանի որ չգիտի թե երբ կիրացվի գույքերը, որպեսցի նշի կոնկրետ ժամանակ,քանի որ անդամավճարի վճարման միակ աղբյուրը հանդիսանում է գույքերի իրացումը և հետագայում պահանջների բավարարումից իր վարձատրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը պարզաբանեց որ անդամավճարի վճարումը «ՍԳԿԿ» ԻԿԿ Կանոնադրությամբ սահմանված պարտականություն է և դա պետք է կատարվի անվերապահորեն և առանց պայմանների,իսկ գործադիր մարմնի առաջարկը պարտավորությունների մարման ժամանակացույցի վերաբերյալ ընդհանուր մշակված ձև է ,որը այս պահին միակն է և այլընտրանք չունի,իսկ կառավարչի պարտականությունները կատարումը տվյալ դեպքում անդամավճարի վճարումը,պարոն Խալաթյանի այլ պայմաններից կախման մեջ դնելը, իր կարծիքով աշխատանքային մեթոդ չէ և չի կարող բացառել կառավարչի մեղքը անդամավճարների չվճարումների մեջ:

Ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը,ով մասնավորապես նշեց.որ այո հասկանալի է,որ բազմաթիվ են այն ՍԳ կառավարիչները,որոնք ունեն ֆինանսական խնդիրներ կապված անձնական վարկային պարտավորությունների կամ այլ ֆինանսական դժվարությունների հետ,հենց այդ պատճառները հասկանալով և ընդունելով էլ գործադիր մարմինը մշակել է համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/-ի ձևը, որը ըստ էության պարտքերի տարաժամկետման և մաս մաս վճարելու հնարավորություն է,որը բխում է տվյալ դեպքում պարտք ունեցող կառավարչի շահերից/որից ինչպես հանձնաժողովի անդամը փաստեց օգտվել է նաև ինքը/ և այս պահին զարմանալի է այն փաստը որ կան կառավարիչներ որոնք չեն օգտվում այդ հնարավորությունից և փորձում են իրենց պարտավորությունները մարել ինչ ինչ պայմանների կատարման դեպքում և դա այն դեպքում երբ բազմաթիվ այլ ԻԿԿ անդամներ պատշաճ կատարել և կատարում են իրենց պարտավորությունները ամբողջությամբ ու առանց որևէ տարաժամկետման:

Հանձնաժողովի անդամները և հրավիրված Վերստուգիչ հանձնաժողովի նախագահն քննարկեցին ստեղծված իրավիճակը և ընդհանուր առմամբ եկան այն եզրակացության,որ «ՍԳԿԿ» ԻԿԿ բոլոր անդամներն էլ պետք է կատարեն «ՍԳԿԿ» ԻԿԿ Կանոնադրության դրույթները և ընդհանուր ժողովի որոշումները առանց քննարկման,ամբողջությամբ և առանց պայմաններ դնելու և այն փաստը որ վերոնշյալ սնանկության գործով կառավարիչները չեն կատարել անդամավճարների վճարումները և ավելին չեն էլ փորձում կատարել անդամավճարների գծով իրենց պարտավորությունների մարմանն ուղղված գործողություններ,դրանք պայմանավորելով այլ գործոններով կամ հանգամանքների բերումներով,որի վկայությունն է ՍԳ Կառավարիչ՝ Ռ.Խալաթյանի հայտարարությունները և մնացած 4 կառավարիչների Կարգապահական հանձնաժողովի նիստին չներկայանալը,որի մասին պատշաճ ծանուցված էին:

Քննարկումներից հետո Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Հարությունյանը առաջարկեց հետևյալ որոշման նախագիծը.

ՍԳ կառավարիչներ՝Մայիս Հայրապետյանին,Ռուբեն Խալաթյանին, Ստեփան Աբրահամյանին,Գևորգ Շահվերդայնին,«ՍԳԿԿ» ԻԿԿ Կանոնադրության դրույթները չկատարման,այն է սահմանված,«ՍԳԿԿ»ԻԿԿ անդամի համար սահմանված անդամավճարները չվճարելու համար «ՍԳԿԿ» ԻԿԿ սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի Կանոնների 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով համարել մեղավոր և ,«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական վարույթի անցկացման Կարգի 4.2 կետի կարգով

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ անդամ սնանկության գործով կառավարիչներ՝ Մայիս Հայրապետյանին, Ռուբեն Խալաթյանին,Ստեփան Աբրահամյանին՝հայտարարել նկատողություն

2.Պարտավորեցնել ,«ՍԳԿԿ» ԻԿԿ անդամ սնանկության գործով կառավարիչներ՝ Մայիս Հայրապետյանին,Ռուբեն Խալաթյանին,Ստեփան Աբրահամյանին և Գևորգ Շահվերդայնին 10 աշխատանքային օրվա ընթացքում մարել սույն նիստի օրվա դրությամբ ԻԿԿ-ի նկատմամբ պարտպարտավորությունները կամ կատարել դրանց մարմանն ուղղված գործողություններ՝այն l կնքել և կատարել համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված ՍԳ կառավարիչների կողմից,նույն կետով նախատեսված պայմանները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում առանց լրացուցիչ

Կարգապահական Հանձնաժողովի նիստ հրավիրելու համարել 1/մեկ/ տարվա ընթացքում կրկնված կարգապահական խախտում և հայտարարել խիստ նկատողություն,տեղադրելով այն ԻԿԿ ինտերնետային կայքում:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին որոշման նախագիծը և հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը որոշման նախագծը համարելով ընդունելի առաջարկեց 2-րդ կետում 10 աշխատանքային օրվա փոխարեն,ժամկետը երկարացնել և դարձնել 30աշխատանքային օր, հիմնավորել ,որ դիմացը արձակուրդների ժամանակաշրջան է և կարող են կառավարիչների մոտ առաջանան օբեկտիվ դժվարություններ ժամկետների հետ կապված:

Հանձնաժողովի անդամ՝Տ.հարությունյանը համաձայնեց կարծիքի և հիմնավորման հետ:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը չհամաձայնելով որոշման նախագծի հետ առաջարկեց իր որոշման նախագծի տարբերակը,այն է.

1.Կրկին անգամ գրավոր կարգով,պատշաճ ծանուցմամբ,տեղեկացնել ՍԳ կառավարիչներ Մայիս Հայրապետյանին,Ռուբեն Խալաթյանին,Ստեփան Աբրահամյանին և Գևորգ Շահվերդայնին իրենց պարտավորությունների և դրանց կատարման վերաբերյալ,այդ թվում նաև համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/ կնքելու հնարավորության վերաբերյալ:

2.Պարտավորությունների մարման,կամ համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/ կնքելու համար տալ 30 աշխատանքային օրյա ժամկետ:

3.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված ՍԳ կառավարիչների կողմից,նույն կետով նախատեսված պայմանները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում առանց լրացուցիչ Կարգապահական Հանձնաժողովի նիստ հրավիրելու հայտարարել նկատողություն, տեղադրելով այն ԻԿԿ ինտերնետային կայքում:

Սույն առաջարկը նույնպես քննարկվեց հանձնաժողովի անդամների կողմից,առաջարկի վերաբերյալ իր դրական մոտեցումը հայտնեց նաև Վերստուգիչ Հանձնաժողովի նախագահ՝ Ջ.Աֆյանը:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյանի կողմից երկու առաջարկն էլ առանձին առանձին դրվեց քվեարկության:

Առաջինը քվեարկության դրվեց հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանի առաջարկած որոշման նախագիծը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 1
Դեմ – 3
Ձեռնպահ – 0
Առաջարկը չընդունվեց:

Երկրորդը Հանձնաժողովի նախագահն քվեարկության դրեց իր առաջարկը,հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանի առաջարկած ուղղմամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 3
Դեմ – 1
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ անդամ սնանկության գործով կառավարիչներ՝ Մայիս Հայրապետյանին, Ռուբեն Խալաթյանին, Ստեփան Աբրահամյանին և Գևորգ Շահվերդայնին `հայտարարել նկատողություն

2.Պարտավորեցնել ,«ՍԳԿԿ» ԻԿԿ անդամ սնանկության գործով կառավարիչներ՝ Մայիս Հայրապետյանին,Ռուբեն Խալաթյանին,Ստեփան Աբրահամյանին և Գևորգ Շահվերդայնին 10 աշխատանքային օրվա ընթացքում մարել սույն նիստի օրվա դրությամբ ԻԿԿ-ի նկատմամբ պարտպարտավորությունները կամ կատարել դրանց մարմանն ուղղված գործողություններ՝այն l կնքել և կատարել համաձայնագիր-պայմանագիր /ժամանակացույց/-ը:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված ՍԳ կառավարիչների կողմից,նույն կետով նախատեսված պայմանները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում առանց լրացուցիչ Կարգապահական Հանձնաժողովի նիստ հրավիրելու համարել 1/մեկ/ տարվա ընթացքում կրկնված կարգապահական խախտում և հայտարարել խիստ նկատողություն,տեղադրելով այն ԻԿԿ ինտերնետային կայքում:

4.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Խաչատրյան

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝
«ՍԳԿԿ»ԻԿԿ Վերստուգիչ հանձնաժողովի Նախագահ՝ Ջ.Աֆյան